



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հոկտեմբերի 2017 թվականի N 99-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝

#### ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 241-Ա որոշման հավելված 36-ում «Բալասանյան Կարինե» բառերը փոխարինել «Սարգսյան Անուշ» բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կից՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ն.Հանդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 20-ի N 6 գրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ



2017 թ. հոկտեմբերի 6  
ք. Կապան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
<<ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀՀ Սյունիքի մարզ գյուղ Ներքին Հանդ nerqin-hand@mail.ru հեռ.0285-60569 քջջ. 077-770977  
թիվ -6- <<20.09. 2017թ>>

ՀՀ Սյունիքի մարզպետ պարոն Վահե Հակոբյանին

Մեծարգո մարզպետ

Ձեզ է ներկայացվում 2017թ-ի սեպտեմբերի 20 -ին դպրոցում տեղի ունեցած դպրոցական  
խորհրդի թիվ 7 արձանագրության քաղվածքը անվանական կազմում փոփոխություն  
կատարելու մասին:

Խորհրդի նախագահ

Գ. Գոսգոսյան

## Քաղվածք

<<Ներքին Հանդի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կողմից կառավարման մարմնի խորհրդի 2017թ-ի սեպտեմբերի 20-ին թիվ 7 նիստի արձանագրությունից

Օրակարգում --- Դպրոցում տեղի ունեցած ծնողական խորհրդի նիստի որոշման մասին:

Լսեցին --- Գ. Գասպարյանի ելույթը: <<Ներքին Հանդի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կողմից կառավարման մարմնի խորհրդի, ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամի փոփոխության մասին: Նա նշեց, որ քանի որ ծնողական խորհրդի կազմից ընտրված խորհրդի անդամ Կարինե Բալասանյանը այժմ դպրոցում սովորող երեխա չունի, ուստի դպրոցական խորհրդի անդամ չի կարող լինել: Անհրաժեշտ է ծնողական խորհրդից կազմից ընտրել նոր անդամ: Ծնողական խորհրդի նիստում ծնողները փակ գաղտնի քվեարկությամբ ընտրեցին Անուշ Սարգսյանին, որը դպրոցում ունի երկու սովորող երեխա: Նշվեց նաև, որ ծնողներից և ոչ մեկը չունի բարձրագույն կրթություն: Հիմք ընդունելով <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը և կառավարման խորհրդի աշխատակարգը

Որոշեցին - Դիմել ՀՀ Սյունիքի մարզպետ պարոն Վահե Հակոբյանին փոփոխությունը հաստատելու համար:

խորհրդի նախագահ

Գ. Գասպարյան